

## ՀՈՐՀՈՐԻ ԿԱՐԳԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

### ԴԱԿԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

Բոլոր լեզուներում նախադասություններն առանձնանում են ըստ հաղորդակցական տեսակների՝ ներկայացնելով խոսողի վերաբերմունքն իրականության նկատմամբ: Այս տեսանկյունից հորդոր արտահայտող նախադասությունները դիտվում են որպես դրողական բնույթի հաղորդակցային միջոցներ, որոնց բնորոշ է զգացմունքայնությունը, որի շնորհիվ դրանք կարող են ձեռք բերել տարբեր նրբերանգային դրսևորումներ:

Ե՛վ անգլերենը, և՛ հայերենը չունեն առանձին հորդորական եղանակ, հետևաբար հորդորի կարգը, որը մեծ մասամբ ունի կամային բնույթ և ծառայում է խոսողի կամքի արտահայտմանը, հիմնականում ներկայանում է հրամայական եղանակի միջոցով: Հարկ է նշել, որ անգլերենում և հայերենում մոտեցումը հորդորական նախադասության նկատմամբ միանշանակ չէ: Անգլերենում հորդորական բնույթի նախադասությունները երբեմն նույնացվում են հրամայական նախադասություններին՝ միևնույն կառուցվածքաձևաբանական բնութագիրն ունենալու հիմնավորմամբ՝ անտեսելով իմաստային գործոնը: Ըստ այդմ՝ հորդորական և հրամայական նախադասությունները բնութագրելու համար առավելապես կիրառվում է «հրամայական նախադասություն» (imperative sentence) եզրույթը, և չենք հանդիպում «հորդորական նախադասություն» (inducive sentence) գիտաբանին: Արդյունքում՝ հորդորի կարգին բնորոշ տարբեր իմաստային դրսևորումներ (ցուցում, խորհուրդ, խնդրանք, առաջարկ, հրավեր, նախազուշացում և այլն) հայտնվում են միևնույն «հրամայական» հասկացության ոլորտում:

Հայերենում, ի տարբերություն անգլերենի, մոտեցումը մի փոքր այլ է: Եթե հայ լեզվաբաններից Է. Աղայանը<sup>1</sup>, Գ. Ջահուկյանը<sup>2</sup>, Ս. Գյուլբուդադյանը<sup>3</sup> և այլք չեն գործածում «հորդորական նախադասություն» գիտաբանը, ապա մյուսները (օրինակ՝ Յ. Պետրոսյան<sup>4</sup>) զուգահեռաբար կիրառում են այն նաև հրամայական նախադասության համար, իսկ Ա. Պապոյանն ու Խ. Բաղիկյանը գտնում են, որ հրամայական եղանակի՝ բայերով արտահայտված բոլոր նախադասությունները հրամայական կոչելը նեղացնում է այդ տեսակի մեջ մտնող նախադասությունների իմաստները և ընդունում են «հորդորական նախադասություն» հասկացությունը<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Է. Աղայան, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, Եր., «ՊԲՀ», 1963, № 3:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Գյուլբուդադյան, ժամանակակից հայերենի շարահյուսություն, Եր., 1988:

<sup>4</sup> Տե՛ս Յ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 74:

Հիմք ընդունելով այն փաստը, որ երկու լեզուներում էլ հորդորի կարգը լայնածավալ գործածություն և բազմազան ձևավորում ունի, նպատակահարմար է այդ կարգն արտահայտող կառույցը դիտել որպես հաղորդակցական նախադասության առանձին տեսակ, որը, սակայն, չունի իր սեփական ձևաբանական արտահայտչամիջոցները:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում հրամայական եղանակի միջոցով արտահայտվում են տարաբնույթ իմաստային նրբերանգներ, որոնք հաճախ շատ հեռու են հրաման լինելուց: Միաժամանակ անհերքելի է, որ երկու լեզուներում էլ հորդորական բնույթի նախադասություններն ունեն արտահայտչամիջոցների լայն շրջանակ, որոնք դուրս են հրամայական եղանակի հարացույցի սահմաններից:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր լեզվի հատուկ են ինչպես ձևաբանական, այնպես էլ գործաբանական որոշակի առանձնահատկություններ, որոնք կարող են իրենց համարժեքներն ունենալ մեկ այլ լեզվում ևս: Այս առումով կարող ենք նշել, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում հորդորական նախադասությունները ցույց են տալիս մի գործողություն, որը թելադրվում է խոսողի կողմից (առաջին դեմք) խոսակցին (երկրորդ դեմք), հետևաբար ենթակայի հիշատակման կարիք չի զգացվում: Ժամանակային առումով դրանք բնորոշվում են որպես ապառնի ժամանակաձևեր և հիմնականում ներկայացված են հրամայական եղանակով կիրառված բայաձևերով: Դրանց ամենահիմնական ձևը անգլերենում ուղղակի բայական արտահայտությունն է՝ “Go”, “Tell”, “Close”, որն ըստ էության չի տարբերվում բայի անորոշ ձևից՝ առանց “to” մասնիկի, հետևաբար առանց հնչերանգի և համապատասխան համատեքստի դրանք հաղորդակցային որևէ տեղեկատվություն չեն պարունակում: Ի տարբերություն անգլերենի՝ հայերենը թեքական լեզու է, ինչը ենթադրում է, որ խոնարհված բայն իր մեջ արտացոլում է քերականական բոլոր կարգերը (դեմք, թիվ, եղանակ, ժամանակ)՝ ձեռք բերելով տարբեր վերջավորություններ (գնա/գնացե՛ք, պատմիր/պատմե՛ք, փակիր/փակե՛ք), որոնք տարբերակիչ դեր են խաղում հորդորական բնույթի նախադասությունների ճանաչման գործում:

Գործառական առումով թե՛ մեկ և թե՛ մյուս լեզվում հորդորական նախադասություններն օժտված են հաղորդակցական ինքնատիպ միտումով՝ նպատակադրումով, որը, կախված խոսակիցների փոխհարաբերություններից և կարգավիճակից (պաշտոն, տարիք), իմաստաբանորեն կարող է դրսևորվել իբրև կարգադրություն, խնդրանք, հրավեր (կոչ), պահանջ, առաջարկ, խորհուրդ, նախազգուշացում, արգելք և ուղեկցվել համապատասխան հնչերանգով: Հարկ է նշել, որ այս լեզուներում հնչերանգը իր վրա է կրում հիմնական նշանակային բեռը, քանի որ, պայմանավորված ձայնի տարբեր տոնայնությամբ և ուժգնությամբ, միևնույն կառուցվածքն ունեցող նախադասություններն իմաստային տարբեր դրսևորումներ են ձեռք բերում: Ի տարբերություն հրամայական նախադասությունների, որոնք արտաբերվում են ավելի խիստ և ուժգին տոնայնությամբ, հորդորական նախադասություններում շեշտվածությունն անհամեմատ մեղմ է, չպարտադրող: Նախադասությունների արտահայտչականությունն ընդգծելու համար այս լեզուների զրավոր խոսքում կիրառվում են կետադրական նշաններ, անգլերենում՝ բացականչական նշան, հայերենում՝ շեշտ:

Հորդորական նախադասությունների ենթակաները երկու լեզուներում հիմնականում արտահայտվում են երկրորդ դեմքով՝ ենթադրելով «you - դու/դուք» զեղչված ձև, որի բառային գործածությունը ավելորդ է դիտվում: Փոխարենը բավականին ընդունված է կոչականների կիրառումը, որոնց ներմուծումը միտված է իրականացնելու հասցեատիրոջ ինքնությունը հստակեցնելու կամ նախադասությանն ավելի մեղմ բնույթ հաղորդելու գործառույթ: Թե՛ անգլերենում և թե՛ հայերենում կոչականի և ենթականի համատեղ օգտագործումը կարող է առաջ բերել դրանք միմյանցից տարանջատելու խնդիր: Այս առումով կարևորվում է ստորակետի՝ որպես զատորոշիչ գործոնի կիրառությունը: Օրինակ՝ ա) «*You may go now, Julie.*» բ) «**Ղու** այժմ կարող ես շնորհավորել ինձ, **սիրելի՛ Սամվել**, եղբայրս՝ հայոց թագավոր, քո հայրը՝ հայոց սպարապետ»\*:

Հետաքրքիր է, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում հորդորական նախադասությունների ստորոգյալի դերում կարող են կիրառվել այնպիսի կառույցներ, որոնց միջոցով խոսողը հասցեատիրոջը դրդում է որոշակի վարքի կամ վիճակի, այլ ոչ թե գործողության: Ընդ որում, անգլերենում այս նպատակով կիրառվում է հրամայականի «be + adjective/ noun/ Participle II» վերլուծական ձևը, իսկ հայերենում՝ «ածական / գոյական + եղիր (եղեք) / կաց (կացեք) / մնա (մնացեք)» համադրությունը, որոնք իմաստային առումով կարող են համարվել հոմանիշ կառույցներ, քանի որ իրականացնում են մարդու վարքը կարգավորող հաղորդակցական միևնույն գործառույթը: Օրինակ՝ ա) «*Be sure now, Paula. Ask some one to bring you.*» բ) «**Ուրախ կաց**, տիկին, մի՛ տանջիր սիրտդ այդ դառն հիշողություններով»:

Հայտնի է, որ հորդորական նախադասություններին բնորոշ զգացմունքայնությունը՝ որպես խոսողի վերաբերմունքը հստակեցնող և ճշգրտորեն մատուցող նկարագիր, առանցքային դեր է կատարում դրանք որակելիս: Ուշագրավ է, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում այդ նկարագիրը երբեմն կարող է իր հաստատուն կառուցվածքային դրսևորումն ունենալ նախադասության կազմում, որի շնորհիվ այն հեշտությամբ ճանաչվում և տարբերվում է մյուսներից: Այս առումով որպես կառուցվածքային ընդհանրություն առանձնանում է «please» - «խնդրում եմ/խնդրեն» բառը (քաղաքավարության ցուցիչը): Փաստորեն, այդ լեզուներում այն կարող է իրավամբ համարվել խնդրողական նրբերանգ ապահովող կառուցվածքային տարր կամ խորհրդանիշ, քանի որ դրա առկայությամբ ցանկացած հորդորական բնույթի նախադասություն ընկալվում է որպես խնդրանք՝ անկախ խոսակիցների փոխհարաբերություններից, խոսքային իրավիճակից և արտաբերված հնչերանգի արտահայտչականությունից: Օրինակ՝ ա) «*Come to London with me, Dad. Please.*» բ) «**Խնդրում եմ**, Սահակ, մի՛ հիշեցրեք ինձ այդ անունը: Ինձ ատելի են բոլոր Ռշտունիները և ամբողջ Ռշտունիքը»:

Որոշակի կառուցվածքային ընդհանրություն է նկատվում նաև ժխտական հորդորական նախադասություններում: Ե՛վ անգլերենում, և՛ հայերենում հորդորական նախադասությունների ժխտական ձևերը հիմնականում կազմվում են նույն սկզբունքով, այսինքն՝ ժխտական մասնիկների ներմուծմամբ, որոնք նախորդում են հիմնական բային՝ մատնանշելով գործո-

\* Օրինակները քաղված են հայ և անգլիագիր գրողների երկերից:

ղության դադարեցում, արգելում կամ կանխում: Ընդ որում, դիտելի է, որ հրամայական եղանակով ներկայացված հորդորական նախադասություններում անգլերենի “don’t” և հայերենի «մի» արգելականները հանդես են գալիս որպես առանձին միավորներ և գրեթե միշտ իրենց վրա են կրում տրամաբանական շեշտը: Օրինակ՝ ա) “Don’t talk so loud,” she begged him. բ) «Այդ **մի՛ հարցրու**, սիրելի՛ Աշխեն, աղաչում եմ քեզ»:

Հայերենում սահմանական, ըղծական, պայմանական, ինչպես նաև հարկադրական եղանակով արտահայտված ստորոգյալ ունեցող հորդորական նախադասությունների ժխտման նշույթավորումն իրականացվում է բայական անդամին «չ» նախադաս մասնիկի հավելումով, որը, ի տարբերություն «մի» արգելականի, իր վրա շեշտ չի կրում: Օրինակ՝ ա) «**Չանցնե՛ս** սահմանը, արքա», - հանկարծ տարօրինակ վճռականությամբ ասաց Գնելը և սպառնալից ոտքի ելավ: բ) «Չէ, չէ, **թո՛ղ** էլ մարդ **չմեռնի**», - իրարանցման մեջ ընկավ արքան ու սաստիկ շփոթվեց այդ առաջարկից: գ) «Բայց դու **չպե՛տք է թույլ տաս**, որ նահապետները զորանան»: Անգլերենում ժխտման գործառույթ կարող են իրականացնել նաև “never” ժխտական մակբայը՝ “Never remind me about it.”, ինչպես նաև “nobody” ժխտական դերանունը՝ “Nobody leave the room”, մինչդեռ հայերենում հորդորական նախադասությունների ժխտական ձևերի նշույթավորումը հնարավոր չէ միայն ժխտական մակբայի կամ ժխտական դերանվան ներմուծմամբ, և անպայմանորեն պահանջվում է ստորոգյալի ժխտում («**երբեք չհիշեցնեք** ինձ այդ մասին», «**Ոչ որ չլքի** սենյակը»), որը ձևաբանական մակարդակում համընկնում է բայի ժխտական խոնարհման հետ:

Առաջին և երրորդ դեմքերին ուղղված հորդոր արտահայտելու համար անգլերենում կիրառվում է “Let smb do smth” կառույցը, որի կազմում ընդգրկված “let” բայը կարող է հանդես գալ և՛ իբրև նշանակային բայ՝ արտահայտելով **խնդրանք** (Let us explain - Թույլ տվեք մեզ բացատրել, Let them go - Թույլ տվեք նրանց գնալ), և՛ որպես օժանդակ բայ՝ արտահայտելով **համատեղ գործողության առաջարկ կամ հրավեր**՝ հոգնակի թվով առաջին դեմքին ուղղված լինելու դեպքում (Let’s sing - Արի երգենք), կամ **կամք, ցանկություն**՝ եզակի թվով առաջին դեմքին (Let me think - Թող մտածեմ) և եզակի կամ հոգնակի թվով երրորդ դեմքին (Let him answer - Թող նա պատասխանի/ Let them leave - Թող նրանք հեռանան) ուղղված լինելու դեպքում: Անգլերենի “Let smb do smth” կառույցի գործառական դաշտի համեմատումը հայերեն համարժեքների հետ բացահայտում է այն իրողությունը, որ հայերենի հորդորական նախադասություններում վերը նշված հաղորդակցային տեսակները ներկայացնելու նպատակով ևս կիրառվում են նույնատիպ շարահյուսական կաղապարներ, որոնք թեև դրսևորում են միևնույն իմաստաբանական հատկանիշները, այնուամենայնիվ ձևաբանական մակարդակում հանդես են բերում որոշակի տարբերություններ: Օրինակ՝ **խնդրանք**՝ “Let+subject+infinitive” ⇔ «**Թույլ տուր/տվեք + ենթակա + անորոշ դերբայ**» ⇔ «**Թող/թողեք + ենթակա + ըղծ. եղ. բայ**», ա) “Let me do it tonight. It’s the smartest course to follow.” բ) «**Թույլ տուր մեզ**, տիկին, **նետահարել** այդ անզգամին...» գ) «**Թողեք ինձ վերադառնամ** այնտեղ, որտեղից եկել եմ», - ասաց մի օր Անտոնինա Իվանովնան: Ակնհայտ է, որ անգլերենում ստորոգյալը կազմված է բայի անորոշ

ձևից (infinitive)՝ առանց “to” մասնիկի, մինչդեռ հայերենում այն կարող է արտահայտվել ինչպես անորոշ դերբայով (մետահարել), այնպես էլ ըղձական եղանակի բայաձևով (վերադառնամ): Հարկ է անդրադառնալ, սակայն, մի նրբության, որ հատուկ է միայն հայերենին: Վերը նշված կառույցների կազմում հայերենում երբեմն ենթական կարող է և չնշվել, ինչը թեև կառուցվածքային առումով որոշակիորեն կտարբերվի անգլերեն համարժեք կառույցից, սակայն իմաստային որևէ շեղում չի գրանցվի: Օրինակ՝ ա) «**Թույլ տուր ազատ լինել և շրջանցել** նման խոսակցությունների համար համեմունքի դեր կատարող բոլոր շեղումները»: բ) «**Թողեք գրոհեն**: Հայրենիքի թշնամու դեմ կամավոր գրոհի ելած մարդուն հաղթելը դժվար է»: Որպես օժանդակ բայ կիրառվելու դեպքում “Let”-ին հայերենում փոխարինում են «թող կամ արի / եկեք» եղանակավորող բառերը: Օրինակ՝ **կամք կամ ցանկություն** “Let + subject + infinitive” ⇔ «**թող + ենթակա + ըղձ. եղ. բայ**», ա) “Let them keep on talking. Maybe they wouldn’t hear Josie.” բ) «**Թող պարթևները տեսնեն**, թե ինչպես է Հայքը պատժում հայրենադավին»: Այս համադրությամբ կազմված կառույցում ևս հնարավոր է ենթակայի զեղչում, որի շնորհիվ կառույցը կունենա «թող+ըղձ. եղ. բայ» տեսքը՝ «**Թող սովորեն սպասել**»: **Առաջարկ**՝ “Let + subject + infinitive” ⇔ «**Արի / եկեք + ըղձ. եղ. բայ**», ա) “Dear little nut!” he cried. “Come and kiss me and **let’s forget.**” բ) «Բայց այստեղ շարժվելու տեղ չկա, **արի դուրս գանք** այս վանդակից, իջևանենք մի բաց տեղ, որ ես կարողանամ ցույց տալ քեզ իմ հարստությունը, և դու էլ հնարավորություն ունենաս ընտրելու քո ցանկացածը»:

Առաջարկ արտահայտելու դեպքում անգլերենում սովորաբար կիրառվում է “Let’s” կրճատ ձևը, որն օժանդակ բայի և հոգնակի թվով առաջին դեմքի դերանվամբ արտահայտված ենթակայի միաձուլված տարբերակն է, որին հայերենում համապատասխանում են «Արի / եկեք» օժանդակ բայերը: Ի տարբերություն անգլերենի, որտեղ կրճատված տարբերակն այնուամենայնիվ պահպանում է ենթական մատնանշելու կարողությունը, հայերենում ենթական սովորաբար զեղչվում է, քանի որ բայական բաղադրիչն արդեն իսկ պարունակում է ենթակայի դեմքը և թիվը արտացոլող տեղեկատվություն (Արի **զնանք** ⇔ Արի **մենք զնանք** կամ եկեք **զնանք** ⇔ եկեք **մենք զնանք**), ուստի ենթակայի կիրառությունը տվյալ դեպքում կարող է նույնիսկ ավելորդ համարվել: Ուշագրավ է, որ հայերենում առաջարկ արտահայտող նախադասություններում հնարավոր է նաև հիմնական բային նախորդող օժանդակ բայի բացթողումը, որի հետևանքով իմաստային որևէ փոփոխություն չի նկատվում. Օրինակ՝ «Այժմ **խորհենք**, թե ինչ պետք է անենք», - խոսեց Մուշեղը:

Ակնհայտորեն նկատելի է հայերենի ըղձական եղանակի առաջին դեմքով և հոգնակի թվով կիրառված բայաձևի՝ մի ամբողջ հաղորդակցային իրավիճակ ներկայացնելու կարողությունը (խոսող՝ I դեմք, հասցեատեր՝ II դեմք, հաղորդակցային տեսակ՝ համատեղ գործողության իրավեր / առաջարկ), մինչդեռ անգլերենում համարժեք գործառույթն իրականացվում է եռաբաղադրիչ կառույցի միջոցով (օժանդակ բայ + անձնական դերանուն + բայի անորոշ ձև): Այսուհանդերձ կարող ենք ասել, որ համատեղ առաջարկ արտահայտելու համար հայերենի առաջին դեմքի հոգնակի

թվով կիրառված ըղձական եղանակի բայաձևը և անգլերենի “Let’s+ infinitive” կառույցն իմաստային առունով համարժեք միավորներ են:

Ի տարբերություն անգլերենի, որի “Let smb do smth” կառույցի կազմում ընդգրկված ենթական մշտապես կիրառվում է տրական հոլովով (objective case)՝ Let *me* explain, Let *them* tell, Let’s invite, հայերենում միայն անորոշ դերբային նախորդող ենթական է դրվում տրական հոլովով (Թույլ տվեք **մեզ մասնակցել**, Թույլ տվեք **ինձ վերադառնալ**), իսկ ըղձական եղանակի բայաձևին նախորդող ենթական դրվում է ուղղական հոլովով (Թողեք՝ **ես վերադառնամ**, Թող **նա բացատրի**, Թող **նրանք հեռանան**):

Ուսումնասիրվող երկու լեզուներին գործնականում բնորոշ է հորդորական նախադասությունների դրսևորման ևս մեկ ընդհանրական առանձնահատկություն՝ միակազմ հորդորական բնույթի կառույցների կիրառումը, ինչը հնարավորություն է տալիս խոսքը կարճելու, այն ավելի դիպուկ և նպատակասլաց դարձնելու: Այս առումով որպես հորդորի կարգը ներկայացնող ինքնատիպ միջոցներ անգլերենում առանձնանում են բայազուրկ հորդորական կառույցները (verbless imperatives), որոնք՝ որպես լիարժեք հաղորդակցային միավորներ, հաջողությամբ իրականացնում են համապատասխան գործառնություն: Հայերենում այս կառույցներին համարժեք կարող են համարվել բայական անդեմ նախադասությունները (օր.՝ Բարձրացնել ուսման որակը), ինչպես նաև միակազմ անվանականները (օր.՝ Դեպի ռազմի դաշտ, դեպ անմահացում): Ուշագրավ է, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում վերը նշված համարժեք կառույցները ձևաբանական մակարդակում գրեթե նույնանում են: Դրանց գերադաս անդամները հիմնականում արտահայտվում են գոյականով, ածականով և մակբայով, ավելի հազվադեպ՝ դերանվամբ կամ թվականով: Օրինակ՝ ա) “**Silence!** This violence is all most repulsive:” and so, no doubt she felt it. բ) «**Լռություն, պարոններ**,-ասաց քիչ հետո նախագահը,- ես խոսքն այժմ տալիս եմ պ. Դանիելյանին»: գ) “Don’t touch it. **Back away.** I’ll call the bomb squad”, Kaldak said. դ) «**Ետ, բոլորդ բակի մեջ...**թողեք տեսնենք ովքեր են և ինչ են ուզում մեզնից»:

Հայերենում «Չ» ժխտական մասնիկի և անորոշ դերբայի համադրությամբ կազմվող միաբաղադրիչ նախադասությունները՝ «Չխոսել», «Չծխել», «Չաղմկել», նույնանման կարգավիճակ են ձեռք բերում, ինչ որ անգլերենում “No” մասնիկի և գերունդիումի օգնությամբ կազմվող հորդորական կառույցները՝ “No talking!”, “No smoking!”, “No honking!”, որոնք, ըստ էության չունենալով կոնկրետ հասցեատեր, ընկալվում են որպես համընդհանուր արգելված կամ չթույլատրվող գործողություն:

Որպես ընդհանրական հատկանիշ կարելի է նշել ձայնային ընդօրինակումների (sound imitations) օգնությամբ հորդոր արտահայտելու հնարավորությունը, որը բնորոշ է և՛ անգլերենին, և՛ հայերենին: Օրինակ՝ ա) “**Shh**, don’t think about it.” He drew her closer. “This moment is damn magnificent. To hell with---“ բ) “**Shhh!** - Here comes Mother. She is not acquainted with my plans.” գ) «**Ս ս ս**, - արեց Դանիելյանը, որ ավելի մոտ էր լուսամուտին, - կարծեմ չվկացնում են»: Բերված օրինակներում խոսողի թելադրանքն արտա-

հայտված է ընդամենը հնչյունների միջոցով, որոնք ուղղված են լռեցնելու խոսակցին:

Թե՛ անզլերենին և թե՛ հայերենին գործնականում բնորոշ է հորդոր արտահայտելու նպատակով նաև այլ տեսակի նախադասությունների կիրառումը՝ խոսակցական ներակայումները, որոնք կարող են ունենալ ինչպես արտակա, այնպես էլ ներակա կամային դրսևորում: Անզլերենում այս երևույթը դիտվում է որպես «անուղղակի խոսքային ակտ» (indirect speech act), որը, ըստ էության, մեկ իլլոկուտիվ ակտի գործածությամբ մեկ այլ իլլոկուտիվ ակտի իրականացումն է, ինչի հիմնական դրոպապատճառը, ըստ Ջ. Սերլի, քաղաքավարությունն է<sup>6</sup>: Հայերենում ևս նկատվում է նմանատիպ երևույթ: Մասնավորապես Ա. Պապոյանը և Խ. Բաղիկյանը նախադասությունը դիտում են որպես երկպլանային միավոր, որն ունի կառուցվածք և հաղորդակցման գործառույթ<sup>7</sup>: Համաձայն այդ մոտեցման՝ նախադասությունները կարող են նույնանալ ըստ կառուցվածքի և իմաստի, իսկ դա նշանակում է, որ նախադասության միևնույն կառուցվածքային տեսակը կարող է դրսևորել տարաբնույթ գործաբանական հատկանիշներ, կամ կառուցվածքային միանգամայն տարբեր տեսակներ կարող են ներկայացնել միևնույն հաղորդակցային տեսակը: Երկու լեզուներում այս նպատակով գործնականում կիրառվում են ինչպես պատմողական (declarative sentences or statements), այնպես էլ հարցական (interrogative sentences or questions) նախադասություններ: Օրինակ՝ ա) **“You might wait for an invitation”**, I retorted frigidly. բ) «Քոսակ, այժմ **կարող ես հանգիստ մնալ**, մեզ ոչ ոք չի կարող լսել»: գ) **“I ask you to pass through life at my side-to be my second self and best earthly companion.”** դ) «Օրիորդ, **խորհուրդ եմ տալիս քեզ** մտածել այդ մասին,- վրա տվեց Մեիրուժանը և, չլսելով համառ անտիոքուհու պատասխանը, շտապ դուրս եկավ առանձնասենյակից»: Պետք է նկատել, որ գ և դ օրինակներում նախադասության իմաստային տեսակը պայմանավորված է ստորոգյալի դեր ստանձնած բայի նշանակությամբ (գ-խնդրանք և դ-խորհուրդ): Անզլերենում նմանատիպ նախադասությունները կոչվում են կատարողական (performative sentences):

Անզլերենում հորդոր արտահայտելու համար բավականին ընդունված է հարցական նախադասությունների կիրառումը: Հայերենում ևս նկատվում է այդ երևույթը: Օրինակ՝ ա) **“Can you change the subject?”** բ) «Խնդրեմ, - խոսեց Հաննը, - ինձ շատ հետաքրքրում է հայերեն լեզուն, արդյոք **չե՞ք կարող** մի քանի տող արտասանել. մի ոտանավոր, մի երգ»: գ) **“Would you ever give up talking about his trouser leg,”** she sighs with boredom. դ) «Վերջապես **պիտի ասե՞ս**, թե ինչ է արել նա»: ե) **“Why don't you go away for a bit?”** գ) «Իսկ **ինչո՞ւ քո գանձերը չես նվիրում** Արշակունիներին, չե՞ որ Տիգրանը Գանգեսին ավելի մոտ է»:

Ներակա կամային արտահայտմամբ կառույցների գործաբանական ներուժն ամբողջովին պայմանավորված է հաղորդակցային իրավիճակով և հաղորդակցության մասնակիցների նախնական տեղեկացվածությամբ: Օ-

<sup>6</sup> Տե՛ս Searle J. Indirect Speech Acts.-Syntax and Semantics, Speech Acts ed. by P. Cole and J. Morgan. London and New York: Academic Press, 1975, vol. 5:

<sup>7</sup> Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 74:

րինակ, առաջին հայացքից զուտ պատմողական հնչող "It's 12 o'clock" - «Ժամը տասներկուսն է» նախադասությունը երկու լեզուներում էլ կարող է ընկալվել որպես հորդորական՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն արտաբերվում է ուսուցչի կողմից և ուղղված է տարրական դասարանի աշակերտներին, որոնք սովորաբար այդ ժամին գնում են նախաճաշելու: Այստեղ կարևորվում է արտաբերված նախադասության ճիշտ ընկալումը, որը տվյալ դեպքում անմիջական առնչություն ունի ճանաչողական ոլորտի հետ: Ընդ որում, պետք է նկատել, որ արտահայտման այս ձևը թե՛ մեկ և թե՛ մյուս լեզվում կիրառվում է նույն սկզբունքով: Ակնհայտ է, որ "You are standing on my foot" - «Դուք ոտքիս եք կանգնել» կամ "You left the door open" - «Դուք դուռը բաց եք թողել» նախադասությունների և՛ անգլերեն, և՛ հայերեն տարբերակների միջոցով խոսողը ոչ թե իրողություն է հաստատում, այլ պարզապես փորձում է քաղաքավարի ձևով հասցեատիրոջը դրդել որոշակի գործողության, հետևաբար ճիշտ կլինի դրանք համապատասխանաբար ընկալել՝ "Take your foot away from mine!" - «Ոտքդ քաշիր իմ ոտքի վրայից» և "Close the door" - «Դուռը փակիր» իմաստներով, որոնք, ըստ էության, հրամանի են նմանվում և այնքան էլ քաղաքավարի չեն հնչում:

Ուշագրավ է, որ երկու լեզուներում հորդորի արտահայտչամիջոցների կիրառման համար որևէ նախապայման չի սահմանված, հետևաբար խոսողն իր ցանկությամբ կարող է ընտրել իրեն առավել հարմար կամ գերադասելի ձևը, որը նշված լեզուներում կարող է ինչպես համընկնել, այնպես էլ զգալիորեն տարբերվել: Այստեղ կարևորվում է ոչ թե ձևական միջոցի ընտրությունը, այլ մտքի բովանդակության ճիշտ մատուցումը: Ահա թե ինչու գեղարվեստական գրականության անգլերեն բնօրինակների հայերեն թարգմանություններում իմաստաբանորեն միևնույն միտքը փոխանցող, սակայն ձևականորեն բոլորովին այլ կառուցվածք ունեցող նախադասությունների կիրառումը բավականին հաճախակի հանդիպող երևույթ է: Օրինակ՝ ա) "Now, be reasonable. Let me make you comfortable." ա<sub>1</sub>) «Ողջամիտ եղեք: Թույլ տվեք հարմար պառկեցնել ձեզ»: բ) "I want you to talk to Mrs. Strickland,"- she said. "She's raving about your book." բ<sub>1</sub>) «Դուք պետք է խոսեք միսիս Սթրիքլենդի հետ: Նա հիացած է ձեր գրքով»: Հարկ է նկատել, որ միևնույն ստեղծագործության անգլերեն (ա) և հայերեն (ա<sub>1</sub>) տարբերակներից վերցված օրինակում ձևական միջոցների ընտրությունը համընկնում է, այսինքն՝ նախադասությունները ներկայացված են նույնաման կառույցների միջոցով, մինչդեռ (բ) և (բ<sub>1</sub>) օրինակներում միևնույն միտքը փոխանցող անգլերեն և հայերեն նախադասություններն ունեն միանգամայն տարբեր կառուցվածք:

Այսպիսով, հայերենի և անգլերենի հորդորական բնույթի նախադասությունների զուգադրական ուսումնասիրությունը բացահայտում է կառուցվածքաիմաստային և գործաբանական որոշակի ընդհանրություններ. ա) երկու լեզուներում հորդորը ներկայանում է որպես ավելի լայն հասկացություն՝ ներառելով խնդրանքի, խորհրդի, նախազգուշացման, հրավերի, պահանջի, առաջարկի դրսևորումներ, բ) թեև շարահյուսական մակարդակում եական տարբերություններ չեն նկատվում, այնուամենայնիվ հորդորի արտահայտչամիջոցները հայերենում, ի տարբերություն անգլերենի, ձևաբանական մակարդակում հանդես են բերում ավելի լայն հնարավորու-



թյուններ՝ ներկայանալով ոչ միայն հրամայական և սահմանական, այլև ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներով, գ) ուսումնասիրվող լեզուներում նկատվող տարբերությունները հիմնականում պայմանավորված են տվյալ լեզուներին բնորոշ քերականական առանձնահատկություններով:

**ДАВИД ЕПИСКОПОСЯН – Особенности выражения категории побудительности в английском и армянском языках.** – В статье рассматриваются морфологические, структурные и прагматические особенности побудительных предложений в английском и армянском языках. Категория побудительности выражается в них по-разному, и сравнительный анализ их функционального поля выявляет как общности, так и различия. Что касается различий, то они обусловлены грамматическими особенностями названных языков.

**DAVID YEPISKOPOSYAN – Peculiarities of Expression of the Category of Inducement in English and Armenian.** – The article is devoted to the study of morphological, structural and pragmatic features of inducive sentences in English and Armenian. The comparative analysis of their functional field reveals certain structural and pragmatic similarities as well as differences in the way the category of inducement is expressed in both languages. These differences are conditioned by specific grammatical properties of the compared languages.